



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«01» 04 2018 թ.

No 06/3-2/16410-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 15.02.2018թ.
թիվ Պ-06 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ
հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկման ընդհանուր համակարգի շրջա-
նակներում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները
հարկվում են, մասնավորապես, ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, իսկ արտոնագրային
հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով՝ արտոնա-
գրային հարկով,

- 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ արտոնագրային հարկի հա-
մակարգի շրջանակներում՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գոր-
ծունեության տեսակների մասով, կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ)
շահութահարկին փոխարինող արտոնագրային հարկով, իսկ անհատ ձեռնարկատե-
րերը՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող արտոնագրային հարկով,

- 56-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ՀՀ-ում իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքի գծով ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը, օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, կրում են գործարքի կողմ համարվող՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը կամ մշտական հաստատությունը, ապա այդ գործարքի մասով հարկային հաշիվը, իսկ օրենսգրքով սահմանված դեպքերում նաև՝ ճշգրտող հարկային հաշիվը դուրս է գրվում ՀՀ ռեզիդենտ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կամ մշտական հաստատության կողմից,

- 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ՀՀ-ում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման, ինչպես նաև այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող ապրանքները ՀՀ ներմուծելու (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից)՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների գծով օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները, բացառությամբ նույն մասի երկրորդ պարբերության 5-րդ կետով սահմանված դեպքերի,

- 70-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության 5-րդ կետ համաձայն՝ նույն մասով սահմանված դեպքերում օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը չի համարվում ԱԱՀ վճարող:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորները՝ հայտնում ենք, որ հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում բացառապես արտոնագրային հարկով հարկման ենթակա գործունեության տեսակ (տեսակներ) իրականացնող արտոնագրային հարկ

վճարողը օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով դեպքում կատարվող գործարքների մասով չի համարվում հարկային գործակալ և ոչ ռեզիդենտի փոխարեն, վերջինիս կողմից կատարված գործարքների մասով, ԱԱՀ-ի գծով պարտավորություն չի կրում, եթե այդ գործարքները վերաբերում են արտոնագրային հարկով հարկման ենթակա գործունեության տեսակին (տեսակներին): Նշված դեպքում օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը:

ՀՀ հարկային օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները կիրառելի չեն արտոնագրային հարկ վճարողի նկատմամբ, եթե վերջինս օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չի համարվում հարկային գործակալ և ԱԱՀ-ի գծով պարտավորություն չի կրում:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ